ծանօթութեան աւելի յաջողութեամբ ծանուցել՝ սկսած է այդէն յետեւեալ մասերոյ իւր եղերայլը տալ և նորա խառնել։ Այս ցաւ ինք վերջացնէ․ որ մեր ընդդիմախօս բարեկամը իւրեանց խորհելով ներկայ խնդրոյն վրայ՝ դարձեալ չցուցանի հաւանութ մեր միտքը և խորհուրդը վասն զի նոյն երկինքը անտանելու համար՝ հարկաւոր է անշուշտ նոյն հօրեղբօր տակ լինել։



# ԽԱՉ ՕՐՀՆԵԱԼ ԻՆՁ

(Նուէր ընկերաց մանկանց)

Օրօրանիս մօտը նստած՝
Մայրս անուշ երգերով
Ինձ շատ անգամ քուն էր արած՝
Խաչանշան կնքելով.
Աչքն ու խաչը քեզ ապաւինած՝
Անմեղ անգամ կրկնել էր.
Խաչն էր սիրոյն միշտ առաջնորդ.
Ամեն ժամու մ' կանչել էր.
Երբոր թօթով լեզուս բացաւ,
Խաչի դասն առանդեց.
Խաչ օրհնեա՛լ ինձ, կրկնիր, տաւ,
Գթոտ սիրով պատուիրեց.
Քանի տարի եւ սիրուն դասն
Ես շարունակ կրկնեցի.
Մօրս հետը ժամ գնացի
Խաչելութիւն սիրեցի.
Ուխտատեղի թէ մատուռներ,
Ուր որ եւ ու խռ. գնացի.
Համբուրեցի եւ խաչքարեր,
Խաչ օրհնեա՛լ ինձ կրկնեցի.
Աշխարհ փոքր ինչ եւ մեծացայ.
Մայրս տանուտ գերեզման.
Խաչ օրհնեա՛լ ինձ, կրկնիր, տաւ,
Խաչն է ու անոր ողնակին.
Խաչն ողնական ինձ կանչելով՝
Այսպէս քնքէն սկսայ.
Ամեն դասուս միշտ կրկնելով՝
Շուտով կարդալ սովրեցայ.
Քերականն ուսարանէն
Յետոյ նաեւ վարժարան.
Այսքան տարի եւ կարդացի,
Ուսմունք առայ զանազան.
Բանի քանի շարադրանք
Որ եւ ինչէն գրեցի,
Գրել չսկսած՝ ձեռնամուխ
Խաչ օրհնեա՛լ ինձ դրոշմեցի.
Աստուածաշունչ Աւետարան
Արշալոյս սիրով կարդացի.
Այնքան խաչին սիրոյ նշան
Սրտիս մէջը դրացի.
Զգացի որ խաչի նման
Անծ առանունք է մարդկութեան.
Ամբողջ քրիստոնեութեան դրօշն է նա.
Ճշմարտութեան սա րբ նշան.
Զգացի որ, նախատանքով
Գողգոթայում անկուեցաւ.
Բայց և յետոյ անհուն փառքով
Գմբէթներում փայլեցաւ.
Զգացի որ նա է բարձրն
Արդարութիւն գոչողին.
Նա է կենաց անձուկ ուղին
Ճշմարտութիւն սիրողին.
Աղօթութիւն, ճշմարտութիւն
Նրան ծնունդ երկրաւոր.
Խաչն է նրանց՝ ույժ, զօրութիւն,
Յաւիտենական մայր դայեակ.
Զգացի որ՝ երկունք խաչին
Ծանր է քան ցաւ ծնող մօրը.
Բայց և ծնունդքն արի ուժգին.
Եւ ոչ որպէս հեգ կանանց.
Զգացի որ առանց խաչի
Զինչ վշտաց սփոփանք.
Ոչ ամենն աղատ մտքի.
Եւ ոչ պարկ յաղթանակ.

Օ՜, գայի որ, առանց Խաչի
Ճշմարտութեան սէր չը կայ.
Եւ ոչ կանգնումն ընկած ազգի
Ոչ կեանք, ոչ լոյս մշտակայ.
Օ՜, գայի որ Խաչեալն Աստուած
Իւրոյ համար Խաչ շալկեց.
Մարդկանց սիրով Խաչը գրկած՝
Խաչ վեր առնուլ քարոզեց.
Օ՜, գայի որ Խաչ կայ պատրաստ
Ամեն մարդու առաջին,
Ով կը ցանկայ լինել զգաստ,
Գնալ զհետ մեր Փրկչին.
Օ՜, գայի որ ես էլ ունիմ
Իմ յատուկ Խաչն աշխարհս.
Որ անտրտունջ սիրով առնեմ | քում
Սիրով ամեն դիպուածքում.
Խաչ կայ մարդու ի՛ր կրքերից,
Խաչ ամեն տեղ, ամեն ժամ.
Խաչ կայ անքուն ախտերից,
Դու, հալածանք յարաժամ.
Խաչ կայ կենաց աղէտներից՝
Խաչ բնական դիւ բառնոր.
Խաչ կայ մատնիչ Յուդաներից՝
Խաչ՝ դժուարին, ծանրատար.
Խաչ կայ անմիտ ագէտներից՝
Խնամատարք հանձարին.
Խաչ կայ աշխարհ պաշտողներից՝
Աշխարհի հետ միտքին.
Խաչ կայ խուսար յամառներից
Լոյս դնող մտքերին.
Խաչ բարբարոս իշխողներից՝
Գերութեան լուծ տուողին.
Խաչ կայ անշարժ թոյլ վատերից
Յառաջադէմ ձգտողին.
Խաչ կայ մոլար կարծիքներից՝
Ճշմարտութեր դիւցազին.
Խաչ կայ նենգաւոր խարդախներից՝
Պարզ և ուղիղ սրտերին.
Խաչ կայ ատրուկ օգլիներից՝
Պարզ իրաւունք խնդրողին.
Օ՜, գայի որ, էս քան Խաչերն
Էն Խաչի մօտ ոչինչ են.
Որ մարդասէր գթոտ Տէրն
Տարձաւ իր ուսն հեզօրէն.
Նա է սիրոյ անհուն նշան,
Խաչելոյն Տէր գլխովին.
Սփոփանաց մեծ պատառան —
Արիւմ իր Խաչ բարձողին. —
Օ՜, գայի որ Փրկչի Խաչն էր,
Որ օգնական ինձ կոչեց.
Երբոր մայրս, հեղ որդեակը
Խաչ օգնէ՛ ինձ, գոռ առեց.
Քանի քանի նեղութիւններ,
Որ իմ առջեւ դուրս եկան.
Անոն բերի մօրս պատուէր
Կոչեցի Խաչն օգնական.
Քանի քանի հեշտութիւններ,
Որ ես ինձէն գրկեցի.
Թափեցի յորդ արտասունքներ,
Խաչ օգնէ՛ ինձ. գոչեցի.
Վիշտ ու վտանգ փորձանեցան,
Օ՜, գայի մեծ սփոփանք.
Նուք փոխթուրիկ կուտակեցան,
Նոյի մեջէն անվտանգ.
Օրհնուի քո գերեզմանը.
Որդ եմ, հայր գթոտ.
Որ դու Խաչի փրկարար զանն
Աւանդեր ինձ համառօտ.
Թէ որ մանուկ թոտ հասակէս
Խաչի սէրն չ'ազդէիր.
Ի՞նչպէս սիրտ լինէի ես
Մերկաց մէջ անվեհեր.
Թէոր Խաչի անյաղթ ուժը
Ինձ յարաժամ չցոյցքեր.
Ի՞նչպէս սիրտ առնէի ես
Սուտ անիրաւ զրկանքներ.
Մայր իմ, գաղդ չեմ մոռանալ,
Քանի որ ես կենդանեմ.
Նեղութեանց մէջ չեմ թուլանալ,
Խաչն ինձ պարծանք կանուանեմ.
Ուրախութեամբ ես կը առնեմ | նեմ.
Ամեն զրկանք, ամեն Խաչ.
Քանի սիրով ես կը տանեմ,
Փրկիչն 'ի Խաչ բարձրացած.

Գ. Ա.